

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Լ.ՍԿՐՏՉՅԱՆԻՆ

+

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Ժորա Դանիելի Ջհանգիրյանից
(ղինողի անուն, ազգանուն)

Բարբյուսի 22, հեռ 091-40-70-75, email: gladzor@gladzor.am
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)

Երևանի «ԳԼԱՉՈՐ» համալսարան
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ԴԻՍՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.


1. Համալսարանի կանոնադրության պետական գրանցման համարը՝ 264.080.02085, վկայական 01Ա 020109.
2. Անփույ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.
3. Մոտիվացիոն նամակ /1.5-2 էջ./ ներկայացնել հիմնավորում՝ հանրային խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ.
4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ /4-5 էջ

Դիմող՝



/ Ժ. Ջհանգիրյան /

13 մայիսի __ 2016 թ.





Հարգարժա՛ն Լ. Մկրտչյան,

Երևանի «Գլաձոր» համալսարանը հիմնադրումից ի վեր հետևողական է եղել իր՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատության առաքելության իրականացմանը, այն է՝ տրամադրել որակյալ կրթություն, ապահովել համալսարանում կրթության որակի և մշակույթի ձևավորումն ու կայացումը և աշխատաշուկայի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան կրթության տրամադրումը:

Հաշվետու տարիներին ևս համալսարանի գործողություններն ու ծրագրերը բացառապես ուղղված են եղել այդ նպատակների իրականացմանը:

Համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել և իրականացվել է համալսարանի ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան:

Համալսարանի գործունեությունը կոչված է եղել խթանելու համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը:

Մասնավորապես՝

- Իրականացվել են ուսումնական գործընթացի բարելավման ու զարգացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, դասավանդման որակի բարձրացման, զիտահետազոտական գործունեության ընդլայնման և այլ ուղղություններով:
- Իրականացվել են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և դասավանդման ու ուսումնառության մեթոդների արդիականացման, կրթության բովանդակության հարստացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ մի շարք գործընթացներ:

- Իրականացվել են դրամաշնորհային ծրագրեր, մասնավորապես «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրանց հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրում» դրամաշնորհային ծրագիրը:
- Աշխատանքներ են տարվել ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան: Ձեռք են բերվել ժամանակակից նոր սարքավորումներ:
- Շարունակական աշխատանքներ են տարվել հասարակության հետ կապերի զարգացման, համալսարանի վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ:
- Համալսարանն ընդգրկված է եղել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող Ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման գործընթացներում: 2015 թվականին համալսարանը ստացել է ինստիտուցիոնալ վերահավատարմագրում (4 տարի ժամկետով)՝ եվրոպական չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան: Այժմ համալսարանի և ստորաբաժանումների աշխատանքներն ուղղված են համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի նախապատրաստմանը:
- Համալսարանը ակտիվացրել է համագործակցությունը հայաստանյան և օտարերկրյա մի շարք կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների հետ՝ կնքելով պայմանագրեր և համագործակցության հուշագրեր:

Ռեկտոր,

Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ճ.Դ. Չհանգիրյան

ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ «ԳԼԱՁՈՐ»

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգարժան ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյան.

Կարևորելով ձևավորվող Հանրային խորհրդի դերը նախարարության գործունեության ռազմավարության պլանավորման, կրթության բնագավառում արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի բարձրացման գործում՝ անհրաժեշտ եմ համարում այդ և դրանից բխող գործընթացներում ներգրավել ՀՀ մասնավոր բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ, Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժորա Դանիելի Ջհանգիրյանին:


Վերջինիս ներգրավվածությունը Հանրային խորհրդի աշխատանքներում կարևորվում է՝ հաշվի առնելով կրթության բնագավառում պրոֆեսոր Ժ. Ջհանգիրյանի կեսդարյա աշխատանքային փորձը, ինչպես նաև շահագրգռվածությունը հայաստանյան կրթական համակարգի բարելավման, ոլորտի մարտահրավերների հաղթահարման, հայաստանյան կրթական համակարգի զբաղվչության և վարկանիշի բարձրացման հարցերում:

Ժ.Դ. Ջհանգիրյանի մասնակցությունը Հանրային խորհրդի աշխատանքներում կնպաստի.

1. ՀՀ ԿԳՆ-ի ոչ միայն պետական բուհերի, քոլեջների, դպրոցների, միջպետական և արտասահմանյան բուհերի և դրանց մասնաճյուղերի, այլև ամբողջ կրթական համակարգի կայացմանը,
2. Նոր ձևավորվող Հանրային խորհրդի ստեղծմանն ու կայացմանը, որպես հարցերի քննարկման իրական մարմին, քանի որ գործող Կոլեգիայի խորհուրդը ձևական կառույց էր, որի նպատակն էր վավերացնել արդեն կայացված որոշումները՝ առանց բովանդակային քննարկման,

3. Կրթության ոլորտում իրական մրցակցություն ապահովող քաղաքականության իրականացմանը,
4. Ազգային արժեքների պահպանմանն ու տարածմանն ուղղված քաղաքականության իրականացմանը, այլ ոչ թե օտարերկրյա բուհերի հովանավորմանը և գովաբանմանը, որոնց նպատակը ոչ թե ազգային արժեքների ստեղծումն է, այլ դրանց արտահանումը,
5. Միասնական որակյալ կրթական համակարգ ստեղծելուն, որը կկարողանա պատրաստել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ, բանիմաց, համամարդկային և ազգային արժեքներ կրող անհատներ,
6. Օբյեկտիվ քաղաքականության ապահովմանը ոչ միայն կրթական հաստատությունների և բուհերի շրջանում, այլ նաև կրթության որակի և տրամադրվող ծառայությունների արդյունավետությանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի տրամադրման հարցերում,
7. Այնպիսի քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, որը կամրապնդի հասարակության մեջ գիտելիքի կարևորությունը, քանի որ կրթությունն ու գիտելիքը շարունակում են մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր և անփոխարինելի գործոն:

13.05.2016



Ճ.Դ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԳՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից գլոբալացվող աշխարհում, երբ հիմնական ռեսուրս է նաև ինտելեկտը, պետությունների գործողություններն ուղղված են այդ ռեսուրսի պահպանմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության համար այդ կարևորագույն ռեսուրսի՝ ինտելեկտի զարգացման հիմնական միջոցներից է կրթությունը: ՀՀ, չունենալով հարուստ բնական ռեսուրսներ, հիմնական ուշադրություն պետք է դարձնի այդ ռեսուրսի պահպանման վրա: Միայն այդպես հնարավոր կլինի ապահովել պետության ու հասարակության բնականոն զարգացումը:

Դրանով պայմանավորված առաջնային և օրակարգային է կրթության բնագավառում ռազմավարական և ազգային շահերից բխող քաղաքականության մշակումն ու իրականացումը: Կարևորելով ՀՀ ԿԳՆ դերը այդ գործում, պետք է նշել, որ չնայած վերջին տարիներին իրականացվող բարեփոխումներին, այսօր համակարգն ունի լուրջ խնդիրներ: Դարեր շարունակ հայ ժողովուրդը կարողացել է գոյատևել ու պայքարել օտարանալու դեմ՝ ունենալով ազգային պոտենցիալին հարիր կրթական միջավայր, կրթական համակարգ: Բայց այսօր կրթական համակարգը ոչ միայն այդ խնդիրները չի լուծում, այլև հակառակ ազդեցություն է ունենում պետության և հասարակության զարգացման վրա: Ցավոք, այսօր ունենք այնպիսի կրթական համակարգ, երբ յուրաքանչյուր դիմորդ ուսանող է, յուրաքանչյուր ուսանող՝ շրջանավարտ, իսկ դիպլոմն ուղղակի փաստաթուղթ, որը գործի է դրվում հիմնականում «զավ բարեկամ» ունենալու դեպքում: Կրթական համակարգի խնդիրների հիմնական պատճառները պայմանավորված են ոլորտում ԿԳՆ վարած քաղաքականությամբ, մասնավորապես՝


1. Հանրակրթական դպրոցների դերի նվազում գիտելիքների ձեռքբերման գործում: Բուհ-դպրոց հարաբերությունները փոխկապված են. Դպրոցից-բուհ, և որքան բարձր է դիմորդի ինտելեկտը, ուսման, կրթության և գիտելիքի գնահատումը և արժևորումը, այնքան մեծ է հավանականությունը, որ բուհը կարող է ունենալ որակյալ մասնագետ-շրջանավարտ, որը վաղը նորից մտնելու է դպրոց և կրթելու նոր դիմորդներ: Սակայն, վերջին տարիներին անհամեմատ նվազել է դիմողների ինտելեկտը. բարձրագույն ուսումնական հաստատություն դիմողը երբեմն չունի ոչ միայն տարրական գիտելիք, այլ նաև աշխարհայացքային կողմնորոշումներ,
2. Կրթության բովանդակության ու նպատակի մասին ընդհանուր պատկերացումների բացակայություն: Մասնավորապես, կրելով երկու համակարգերի ազդեցություն կրթական համակարգի բովանդակության մասին բացակայում է հստակ պատկերացում ոչ միայն անհատական, այլև ընդհանուր և պետական մակարդակներում: Այժմ գտնվում ենք մի փուլում, երբ մի կողմից պահպանվում են ինտերցիայով շարունակվող կրթական խորհրդային ավանդույթներ, իսկ մյուս կողմից առաջարկվում և/կամ պարտադրվում ժամանակակից արևմտյան կրթական մոտեցումներ: Այսպիսով, քանի դեռ հստակ չէ կրթության բովանդակությունն ու նպատակը բոլոր մակարդակներում (անհատական, ընդհանուր և պետական), կրթական համակարգը չի համապատասխանի պետության ու հասարակության շահերին ու նպատակներին, իսկ շրջանավարտները չեն ունենա միջազգային և ազգային պահանջներին համապատասխան գիտելիքներ,
3. Կրթական համակարգում վերջին տարիներին ընթացող լայնածավալ բարեփոխումները էլ ավելի խորացրին կրթության համակարգային ճգնաժամը: Պատճառներից մեկն այն է, որ կատարվող փոփոխությունները վերաբերում են ավելի շուտ կրթական համակարգի ձևին, քան բովանդակությանը: Ներդրված արևմտյան համակարգը իրեն դեռևս չի

արդարացրել՝ 12-ամյա դպրոցական կրթություն, կրեդիտային համակարգ, մագիստրատուրան և այլն,

4. Հասարակության մեջ դեռևս գիտելիքն ու կրթությունը չեն արժևորվում. ուսումնական հաստատություն և մասնագիտություն ընտրելիս ծնողներն ու դիմորդներն առաջնորդվում են ոչ թե տվյալ ուսումնական հաստատության բովանդակությամբ, այլ ձևով, կարևորում են ոչ թե մասնագիտության պահանջը հասարակության մեջ, կամ իրենց նախասիրություններն ու հնարավորությունները, այլ մասնագիտության վարկանիշը,
5. Կրթության համակարգում տարվող ոչ միասնական քաղաքականություն, երբ Բոլոնիայի և դրանից հետո կնքված բոլոր հռչակագրերից բխող ուսումնական հաստատություններին տրվող ինքնավարությանն ընդառաջ, սահմանափակվում է մասնավոր բուհերի ինքնավարությունը,
6. Ցավոք, ունենք մի իրավիճակ, երբ ՀՀ ԿԳՆ վարած քաղաքականությամբ է պայմանավորվում նաև Հայաստանից «ուղեղների արտահոսքը»:

Այնուամենայնիվ, կարծում եմ, որ ՀՀ ԿԳՆ, ողջ կրթական հանրությունը, հասարակությունը ձեռնամուխ կլինեն այնպիսի քաղաքականության իրականացմանը, որը կվերականգնի հայկական ավանդական արժեքները կրթական համակարգում, հասարակության մեջ կարժևորվի կրթության և գիտելիքի դերը, իսկ գիտելիքը կդառնա զենք, որով այսօրվա Հայաստանը կարող է պայքարել և լինել մրցունակ ամբողջ աշխարհում:

13.05.2016



Ժ.Դ.ՋԱՆԳԻՐՅԱՆ